ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/16

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.06.2017թ. թիվ 03/27-1/11332-17 գրությամբ «Լինարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1.ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1757 գրության հիման վրա, 22.06.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Լինարե» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1757 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Լինարե» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «Լինարե» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով:

Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.05.2017թ. Ընկերությանն առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքում պարզվել է, որ դրանցում բացակայում են ընթացակարգի հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորող՝ նմանատիպ պայմանագրի հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 15.05.2017թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով առաջարկել է «Լինարե» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված

անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում «Լինարե» ՍՊԸ-ի կողմից պահանջված փաստաթղթերը չեն ներկայացվել (դրանք ուղարկվել են ուշացումով՝ միայն 18.05.2017թ., այսինքն սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի և հանձնաժողովի կողմից չեն քննարկվել):

Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Լինարե» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել տվյալ չափաբաժինների մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցներին»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի լիազորված ներկայացուցիչներ՝ Ռոման Մարդոյանը և Նորայր Հարությունյանը:

3. <u>«Լինարե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «Լինարե» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2017թ. թիվ 03/27-1/11332-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Արթուր Շեգունցը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/04 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2017թ. թիվ 03/27-1/11332-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1757 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ հրավեր), «Լինարե» ՍՊԸ-ի կողմից 21.03.2017թ. ներկայացրած հայտի պատճենը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 22.03.2017թ. և 02.05.2017թ. նիստի N 3, 12.05.2017թ. նիստի N 4 արձանագրությունները, «Լինարե» ՍՊԸ-ի 27.06.2017թ. Խորհրդում կայացած նիստի ժամանակ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«Լինարե» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 02.05.2017թ. կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով որոշել ընթացակարգի 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժիններին չափաբաժինների մասով «Լինարե» ՍՊԸ-ին ճանաչվել առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ համաձայն նույն արձանագրության թիվ 1 հավելվածի և առաջարկել է ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը հաշվի առնելով, որ «Լինարե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են ընթացակարգի հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի հաշիվ-ապրանքագրերի պատճենները՝ 12.05.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով որոշել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և 15.05.2017թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով առաջարկել է «Լինարե» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սակայն, պահանջված փաստաթղթերը «Լինարե» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են ուշացումով, այսինքն սահմանված ժամկետի խախտմամբ և Հանձնաժողովի կողմից դրանք չեն քննարկվել:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Լինարե» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3.1 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «Քիմիական նյութերի (այդ թվում՝ ախտորոշիչ նյութերի և պարագաների) գնման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 8.633.300 ՀՀ դրամ, և պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Խորհրդում 27.06.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի ժամանակ «Լինարե» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ Ընկերության կողմից ներկայացված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերում բացակայել են ընթացակարգի հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հիմնավորող նմանատիպ պայմանագրի հաշիվ-ապրանքագրերի պատճենները, սակայն նշեց, որ Ընկերությունը հաշիվ-ապրանքագրերի փոխարեն թյուրիմացաբար՝ տեխնիկական վրիպման արդյունքում, երկու անգամ ուղարկել է հանձնման-ընդունման արձանագրությունների փաթեթը:

Միաժամանակ, Ընկերության տնօրենը Խորհրդին հայտնեց, որ պահանջված փաստաթղթերն ուշացումով ներկայացնելու պատճառը կապված է նշված ժամանակահատվածում վերջինիս Հայաստանի Հանրապետությունից բացակայելու հանգամանքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ

պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ r.mardoyan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Հրավերի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած

որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և նույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի II Մասով նախատեսված հայտը պատրաստելու Հրահանգի 3.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և նույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին ***r.mardoyan@mil.am*** է ուղարկում նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի

կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ սահմանված ժամկետում «Լինարե» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստող փաստաթղթերը Հանձնաժողովին չեն ներկայացվել և Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդը գտնում է, որ «Լինարե» ՍՊԸ-ն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերն հրավերով սահմանված ժամկետներում ամբողջական չներկայացնելով՝ խախտել է ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով ստանձնած՝ հրավերով սահմանված կարգով նույն հայտարարությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պարտավորությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Լինարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Լինարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.06.2017թ. «Լինարե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ